ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2323-Ա/2 **«06» դեկտեմբերի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1698-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻԻ ԱՆՎԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ – ՎԳԱՀ – 2025» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գիտական գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի հոկտեմբերի 22-ի N 1988Ա/2 հրամանով ձևավորված Մասնագիտական փորձագիտական խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 25-ի նիստի N 2 արձանագրությունը, ինչպես նաև Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամի կողմից ստորագրված արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի սեպտեմբերի 9-ի N 1698-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային

հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ – ՎԳԱՀ – 2025» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական նախագծերի ցանկը՝ համաձայն Հավելվածի:

2. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին՝

1) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը.

2) կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը.

3) ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2025 թվականի հունվար ամսից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
06 դեկտեմբեր 2024 թ.
N 2323-Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
«ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ – ՎԳԱՀ – 2025» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ

Ծածկագիր	Ղեկավար	Կազմակերպություն	Վերնագիր	Ֆինանսավորման ծավալ (հազ. դրամ)
1 25SRNSF-6A00	Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ	Միգրացիա և նոր սփյուռքների ձեվավորում. Համեմատական ուսումնասիրություններ Հայաստանում և Վրաստանում	4000.0
	Նատիա Ձալաբադզե	Թբիլիսիի պետական համալսարան, Կովկասի ժողովուրդների միջազգային գիտական հետազոտությունների ինստիտուտ		
2 25SRNSF-1B022	Սահակյան Հասմիկ Արտեմի	ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ	Մեքենայական ուսուցման տեսություն և զուգամիտող կիրառություններ	4000.0
	Վախթանգ Քվարացխելիա	Վրաստանի տեխնիկական համալսարան		
3 25SRNSF-1F020	Փանոսյան Հովիկ Հարությունի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	Հարավ-կովկասյան բարձրադիր քաղցրահամ լճերում ցիանաբակտերիաների և ցիանաֆագերի բազմազանության և ցիանաբակտերիաներով վնասակար ծաղկման վրա դրանց հնարավոր ազդեցության ուսումնասիրությունը	4000.0
	Մարինե Թադիաշվիլի	Վրաստանի համալսարան, Գ. Էլավիայի անվան բակտերիոֆագերի, մանրէաբանության և վիրուսաբանության ինստիտուտ		